ԵՊՀ ՍԹԵՄ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Քննաշրջան՝ 2025թ.

Տևողություն՝ 135 րոպե

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

10-րդ դասարան

ԳԾԱԿՈԴԻ ՀԱՄԱՐ

Քննաթերթիկը բաղկացած է երկու մասից՝

Մաս 1 – Ընտրովի պատասխանով հարցեր,

Մաս 2 – Հիմնավորում/լուծում պահանջող հարցեր:

Հարցերի միավորների ընդհանուր գումարը 40 է:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Յուրաքանչյուր պատասխան նշել «X» նշանով համապատասխան հարցի դիմաց: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր (միևնույն տողի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում համարվում է սխալ, միևնույն տողի որևէ վանդակում ոչ մի նշում չկատարելը համարվում է սխալ):

Նմուշ՝

	1	2	3	4
1		X		

	1	2	3	4
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				
15				

Մաս առաջին – Ընտրովի պատասխանով հարցեր

(Պատասխանները լրացնել **2-րդ էջում** ներկայացված Պատասխանների աղյուսակում)

1. **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ*:**
    1. –թյակ, օր–ր, օրըստ–րե, տն–րեն
    2. ման–ոյա, քնքշ–ոեն, բաց–թյա, թիկն–թոց
    3. բար–ություն, ջր–ոինեք, հ–գուտ, հ–դս ցնդել
    4. հանապազ–ոդ, բն–որան, նախ–ոե, ամեն–ոյա

2. **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *եվ*:**
    1. հոգ–իճակ, ար–առ, ագ–որ, ոսկ–աճառ
    2. կար–եր, գեր–արել, տար–երջ, գոտ–որել
    3. արևմտա–ոոպական, ոսկ–արս, անձր–ային, սերկ–իլ
    4. ագ–ազ, ուղ–ճար,գին–աճառ, դափն–արդ

3. **Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն նույն արմատը**:
    1. հրացան, աքցան, աղցան, ցիրուցան
    2. ուղեկալ, գործուղում, ուղեցույց, խճուղի
    3. թզենի, թզուտ, թզուկ, թզաչիր
    4. հնոտի, հնոց, հնավանդ, հնագետ

4. **Ո՞ր շարքի բոլոր բառերում *հ* ձայնավորի հնչյունափոխություն կա**:
    1. հնագույն, մտավախություն, սնափառ, հոգատար
    2. խճանկար, ալեհույզ, ուղեկալ, փթթուն
    3. ժպտուն, հոգեգալուստ, բծավոր, դիակահանդես
    4. նստակյաց, ամենագետ, ծնունդ, պատվարժան

5. **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *<u>ան</u>* հոլովման**:

1. նախադուռ, գումարում, արյուն, նուռ
2. դերանուն, ամառ, շարժում, ձյուն
3. ձմեռ, սառցալեռ, հաստատում, մանուկ
4. աշուն, ընդմիջում, որմնասյուն, արարում

6. **Ո՞ր այբուբենի տառերի հաջորդականությամբ է Մեսրոպ Մաշտոցը դասավորել իր ստեղծած տառերը**:

1. լատինական
2. հունական
3. ասորական
4. պարսկական

7. **Մովսես Խորենացին ո՞ւմ պատվերով է գրել իր «Հայոց պատմություն» աշխատությունը:**

1. Մեսրոպ Մաշտոցի
2. Սահակ Պարթևի
3. Սմբատ Բագրատունու
4. Սահակ Բագրատունու

8. «Սասնա ծռեր» էպոսում («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞վ է հիմնադրում Մարութա Աստվածածին վանքը:

1. Դավիթը
2. Սանասարը
3. Գագիկ թագավորը
4. Մեծ Միհրը

9. **Նշված վիպերգերից յուրաքանչյուրն արտացոլում է հայ ժողովրդի մղած պայքարը որևէ օտար նվաճողի դեմ. պատասխանների ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա.«Հայկ և Բել»	1. ասորեստանցիների
բ. «Արտաշես և Արտավազդ»	2. բաբելոնցիների
գ. «Արա Գեղեցիկ և Շամիրամ»	3. մարերի
դ. «Տիգրան և Աժդահակ»	4. ալանների

1. ա – 1, բ – 4, գ – 2, դ – 3
2. ա – 2, բ – 1, գ – 3, դ – 4
3. ա – 2, բ – 4, գ – 1, դ – 3
4. ա – 1, բ – 3, գ – 4, դ – 2

10. **Ո՞վ է տրված տողերի հեղինակը:**

Աչքերը ծով ծավալվել են ծիծաղախիտ ծովի վրա առավոտյան՝
երկու փայլակնաձև արեգակի նման, ինչպես շողն է իջնում լույս առավոտից:

1. Նահապետ Քուչակ
2. Մովսես Խորենացի
3. Սայաթ-Նովա
4. Գրիգոր Նարեկացի

11. **Ո՞ր դարի բանաստեղծ է Նահապետ Քուչակը**:

1. 10-րդ
2. 13-րդ
3. 14-րդ
4. 16-րդ

12. **Ի՞նչ է նշանակում *Սայաթ-Նովա* անունը:**

1. աշուղ
2. թափառական երգիչ
3. երգիչի թոռ
4. երգի որսորդ

13. **Ի՞նչ ճակատագրի է արժանանում Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի ավարտին քաջ Թաթուլի դավաճան կինը:**

1. Այրում են բերդի կենտրոնում:
2. Գլխատում են հրապարակավ:
3. Գլորում են ձորը:
4. Ամուսնանում է Շահի հետ:

14. **Ավետիք Իսահակյանի «Ռավեննայում» ստեղծագործությունը ի՞նչ ժանրի է:**

1. պոեմ
2. բալլադ
3. բանաստեղծություն
4. լեգենդ

15. **Ո՞ր բառն է բաց թողնված Վահան Տերյանի «Մի՞թե վերջին պոետն եմ ես» բանաստեղծության տրված հատվածում:**

Վտարանդի, երկրում աղոտ,

Լուսե՛ղ, քեզ եմ երազում,

Եվ հնչում է, որպես աղոթք,

…… քո լեզուն:

1. Բիբլիական
2. Վաղնջական
3. Արքայական
4. Հազարամյա

Մաս 2 – Հիմնավորում/լուծում պահանջող հարցեր

(Պատասխանները գրել յուրաքանչյուր հարցից հետո տրված հատվածներում)

Ա. Աշխատանք տեքստի շուրջ

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր տրված առաջադրանքները:

I

1. Փոքրասիական Եփեսոս քաղաքում պաշտում էին մայրության և պտղաբերության աստվածուհի Արտեմիսին, ներբողում նրա շնորհները, զարմանահրաշ գեղեցկությունը: 2. Ի պատիվ սիրելի դիցուհու՝ եփեսոցիները որոշեցին կառուցել մի այնպիսի տաճար, որի նմանը չի եղել աշխարհում: 3. Հարյուր քսան տարի տևեց մարմարյա նրբագեղ տաճարի շինարարությունը: 4. Նրա վրա աշխատում էին հազարավոր ստրուկներ: 5. Կառույցը, որը ապշեցնում էր շքեղությամբ, բոլոր կողմերից շրջապատված էր բարձրաքանդակ սյուներով, ոսկյա դրոշմապատկերներով: 6. Որմնաքանդակները ներկայացնում էին Արտեմիսին՝ զարդարված բնական քարերով՝ հակինթով, զմրուխտով, փիրուզով: 7. Իսկ աչքերը խոշոր ադամանդներ էին, որոնք շողարձակում էին նաև գիշերվա խավարում:

II

1. Եփեսոսի բնակիչները հպարտանում էին Արտեմիսի տաճարով և քաղաք մտած օտարերկրացիներին առաջնորդում՝ տեսնելու հրաշագեղ շինությունը, ապշելու մարդկային հանճարով:

2. Թվում էր՝ չնաշարհիկ մարմարե կերտվածքը պատկանելու է դարերին: 3. Բայց այն կանգուն մնաց ընդամենը մեկ դար: 4. Մեր թվարկությունից երեք դար առաջ Եփեսոսի փողոցներում հանկարծ լսվեցին տագնապալի բացականչություններ. «Արտեմիսի տաճարն այրվո՛ւմ է»:

III

1. Եփեսոսում ապրում էր չնչին ու ողորմելի մի մարդուկ՝ Հերոստրատ անունով: 2. Սա ոչնչով չէր զբաղվում: 3. Վատնում էր հորից մնացած ժառանգությունը և ամբողջ օրը տանը նստած՝ անգործությունից հորանջում էր ու ձանձրանում: 4. Նա փառատենչ էր ու սնապարծ: 5. Գիշեր-ցերեկ մտածում էր, թե ինչ անի, որ անմահանա դարերում, որ մարդկանց հիշողության մեջ միշտ անմեռ մնա իր անունը:

6. Եվ հանկարծ մի օր գլխում փայլատակեց մի զարհուրելի միտք՝ հրո ճարակ դարձնել Արտեմիսի տաճարը:

7. Ըստ պատմիչների՝ հրդեհը բռնկվել էր միանգամից՝ ընդգրկելով սրահը, փայտամած տանիքը, պատերն ու սյուները: 8. Մարդիկ հոծ խմբերով վազվզում էին մոլեգնած կրակների շուրջը, բայց ոչնչով օգնել չէին կարողանում: 9. Նրանց չկարողացավ օգնել նույնիսկ ինքը՝ Արտեմիս աստվածուհին:

IV

1. Թագավորի հրամանով նույն օրը պալատում հավաքվեց Եփեսոսի ծերակույտը, որ որոշի, թե ինչ պատիժ տա Հերոստրատին:

2. Երկար-բարակ խորհրդակցելուց հետո որոշեցին նզովել և ընդմիշտ մոռանալ նրան:

3. Հաջորդ օրը թագավորն իր մոտ հրավիրեց ժամանակի մեծանուն պատմիչներին, փիլիսոփաներին, գրողներին և հանձնարարեց, որ ոչ մի տեղ ոչ մի բառով չհիշատակեն չարագործի անունը, որպեսզի չկատարվեն անմահանալու մասին նրա սին ցնորքները:

4. Բայց ... Հին աշխարհի որոշ պատմիչները թեև արհամարհանքով, զայրույթով ու նողկանքով, բայց և այնպես թղթին հանձնեցին եղելությունը, և Հերոստրատը, ըստ էության, անմահացավ:

1. **Բարձրաքանդակ** բառում քանի՞ վանկ կա:

Պատասխան՝ _____

2. I հատվածից դո՛ւրս գրիր **պարսավել** բառի հականիշը:

Պատասխան՝ _____

3. I հատվածի 1-4-րդ նախադասություններից դո՛ւրս գրիր հետյալ կազմությամբ բառը՝ արմատ + հոդակապ + արմատ + ածանց:

Պատասխան՝ _____

4. I հատվածից դո՛ւրս գրիր պատճառական բայը:

Պատասխան՝ _____

5. I հատվածից դո՛ւրս գրիր թվականը:

Պատասխան՝ _____

6. I հատվածից դո՛ւրս գրիր որոշյալ դերանունը:

Պատասխան՝ _____

7. II հատվածի 4-րդ նախադասությունից դո՛ւրս գրիր մակբայը:

Պատասխան՝ _____

8. II հատվածի 2-րդ նախադասության մեջ բութը ինչի՞ համար է դրված:

Պատասխան՝ _____

9. Գրի՛ր II հատվածի 2-րդ նախադասության **դարերին** բառի պաշտոնը:

Պատասխան՝ _____

10. II հատվածից դո՛ւրս գրիր դերբայական դարձվածով արտայատված որոշիչը:

Պատասխան՝ _____

11. III հատվածից դո՛ւրս գրիր դարձվածքը:

Պատասխան՝ _____

12. III հատվածից դո՛ւրս գրիր բոլոր հարակատար դերբայները:

Պատասխան՝ _____

13. III հատվածի 3-րդ նախադասությունը քանի՞ պարզ նախադասությունից է բաղկացած:

Պատասխան՝ _____

14. Գրի՛ր III հատվածի 7-րդ նախադասության տեսակն ըստ կառուցվածքի:

Պատասխան՝ _____

15. III հատվածի 6-9-րդ նախադասություններից դո՛ւրս գրիր վերաբերականը:

Պատասխան՝ _____

16. III հատվածի 9-րդ նախադասությունից դո՛ւրս գրիր ենթական:

Պատասխան՝ _____

17. III հատվածի 1-6-րդ նախադասություններից դո՛ւրս գրիր բաղադրյալ ստորոգյալները:

Պատասխան՝ _____

18. IV հատվածից դո՛ւրս գրիր ըղձական եղանակով դրված երկու բայ:

Պատասխան՝ _____

19. IV հատվածից դո՛ւրս գրիր անկանոն բայը:

Պատասխան՝ _____

20. IV հատվածից դո՛ւրս գրիր մեկ կապ:

Պատասխան՝ _____

21. Գրի՛ր IV հատվածի **ցնորք** բառի երկու հոմանիշ:

Պատասխան՝ _____

22. IV հատվածի 1-ին նախադասության **<u>որ</u>** բառը ի՞նչ խոսքի մաս է:

Պատասխան՝ _____

Բ. Տեքստից դուրս հարցեր

23. Տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների: Պատասխանում համապատասխան թվերի դիմաց բառերը գրի՛ր նախադասության մեջ քո տեղադրած հերթականությամբ և համապատասխան քերականական ձևափոխություններով:

Առավոտյան բոլոր ……, …….. գեղեցիկ և շքեղ զգեստներով, ……. արքայադստեր դղյակի առաջ՝ նրան …… իրենց հարգանքը և նվիրվածությունը:

(մրցել, հավաքել, հայտնել, զարդարել)

Պատասխան՝ 1._____ 2. _____

3._____ 4. _____

24. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

Բացառիկ հարցազրույցի էին հրավիրել հռչակավոր աստղագետին, բայց վերջինս հրավերքը չէր ընդունել՝ պատճառաբանելով խիստ զբաղված լինելը:

Պատասխան՝ սխալ է՝ _____

պետք է լինի՝ _____

25. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

Վերջին օրերի դեպքերը, նախարարների՝ երկրի տարբեր կողմերից ժամանելը խառնաշփոթ էր ստեղծել մայրաքաղաքում:

Պատասխան՝ սխալ է՝ _____

պետք է լինի՝ _____